

ՀՀ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի տոնի կապակցությամբ

05.10.2012



Սիրելի՛ ուսուցիչներ,

Մասնագիտական այս գեղեցիկ տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ իմ շնորհավորական խոսքն եմ ուղղում ձեզ եւ սրտի խորքից բխող ջերմ ու անկեղծ բարեմաղթանքներս հղում բոլորիդ:

Այս տոնն առիթ է մեծարելու նրանց, ովքեր իրենց ամենօրյա աշխատանքով կրթում և դաստիարակում են մեր մատաղ սերնդին: Մեր երկրի ապագան մեծապես կախված է նաև ձեր ամենօրյա տքնաջան աշխատանքից: Կրթության հազարամյա պատմություն ունեցող մեր ժողովուրդը առանձնահատուկ հոգատարություն ունի դպրոցի եւ ուսուցչի հանդեպ: Մեր հասարակության կյանքում այսօր էլ բարձր է ուսուցչի դերը: Հայապահպան այն դժվար գործը, որ դուք կրում եք ձեր ուսերին, արժանի է ամենամեծ դրվատանքի և գնահատանքի և դրանով է պայմանավորված, որ իշխանություններն անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում ուսուցիչների համար աշխատանքի բավարար պայմաններ ստեղծելու, ոլորտում առկա խնդիրները ժամանակին ու արդյունավետ լուծելու ուղղությամբ: Վստահեցնում եմ, որ գործընթացը կկրի շարունակական բնույթ:

Պատվարժան մանկավարժներ, բարձր գնահատելով ձեր առաքելությունը, ուզում եմ իմ շնորհակալությունը փոխանցել ձեզ, որ այդքան եռանդ եք ներդնում մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ եւ մաղթում քաջառողջություն, երջանկություն ու ամենայն բարիք:

Խորին հարգանքով՝

Էդիկ Բարսեղյան

ՀՀ Արարատի մարզպետ